նոդի և կաթուղիկոսի – ձեռնադրել եմ քսան և մի քահանայք, միշտ Պողոս Առաքելոյ խօսքերը յիշելով թէ՝ «ի տան մեծի ոչ միայն անօթք ոսկեղէնք և արծաթեղէնք պէտք են, այլ և խեցեղէնք և փայտեղէնք»։ Եւ ձեռնադրեալքն են՝ 1. Քեալբանդի Տէր Սահակն, 2. Խանիչէնի Տէր Սահակն, 3. Երփաւուտի Տէր Խաչատուրն Զիրակացի, 4. Նամախի քաղաքի Տէր Ղևոնդն երևանցի և 5. Տէր Տաճատ Տփխիսեցի քահանայքն, ուսեալք և ուսուցիչք, 6. Բագուի Տէր Ղևոնդն ուսեալ, և 7. Տէր Սահակն, 8. Գիլք գիւղի Տէր Վահանն, 9. Խաչմասի Տէր Պողոսն, 10 Գեօքչայի գիւղաքաղաքի Տէր Յովհաննէսն ուսեալ, 11. Ղազալատայ Տէր Մեսրոպն Տէր Ոսկանեանց և 12. Տէր Խաչատուրն Փանեանց Ղուշեցի ուսուցիչ, 13. Մատրասայի Տէր Գէորգն երևանցի ուսուցիչ, 14. Եւանաշէնի Տէր Մատթէոսն, և 15. Տէր Ղևոնդն, 16. Քեօլույջի Տէր Մուշեղն ուսուցիչ Նախիջևանցի, 17. Սաղիանի Տէր Թոմասն, 18. Ղալակայի Տէր Ներսէսն, 19 Հնդարի Տէր Մանուկն և 20, Մէյսարու Տէր Մկրտիչն Գանձակեցի՝ ուսուցիչ, և 21. Տէր Սարգիսն Զիրակացի, Ղաչաբի գիւղի համար։

Այս ցուցակից երևում է, որ յընթացս հօթնամեայ առաջնորդութեանս չինել, պատրաստել տալով օծել եմ 7 ն եկեղեցիք, բացել եմ 9 ն դպրոցք, և ձեռնադրել եմ 21 քահանայք։ Այս 21 քահանայից՝ ութն ուրիշ թեմերից եմ հրաւիրել, որ օրինակ՝ Տփխիսից, Երևանից, Նախիջևանից և Զիրակից[1]), ըստ որում ինչպէս բազմից պըել եմ կաթուղիկոսին (Մակարին) և սինոդին, թէ Ջամախու թեմում ոչ ոք չի ցանկանում քահանայ լինել, և որը ուսումն ու հասակն առնում է, իսկոյն վազում է Բագու դրամ վաստակելու եթէ թեմի թեմական դրպրոցը քահանայացու չտայ, միշտ պէտք է ուրիշ թեմերից հրաւիրել քահանայք Ջամախուց գիւղերի համար։

Յիշեալ 21 քահանայից՝ ութը ուսեալ և ուսուցիչք են. իսկ 13ը իրենց քահանայից մօտ սովորած՝ ըստ նախնի սովորութեան։

---

[1])Շիրակից ենք կանչել նաեւ Շիրակունի Յարութիւն քահանային 1888։